

համաձայն : Այս շարժական եւ անշարժ ստացուածքին առաջին մասը կարելի եղածին չափ շահաւէտ գնով մը ծախուի կամ տրուի իր յիշեալ կտակակատարներուն կողմէ : Այս առաջին մասին վաճառումէն գոյացած գումարը տրուի եւ բաշխուի աղքատներու , Աստուծոյ սիրուն՝ ողորմութեան համար , նոյնպէս եւ կտակարարիս հոգիին համար թիւ եւ ձայնաւոր պատարագներ ընել տալու , եւ ներկայ կտակագրին մէջ ծանուցուած հրիտակները կատարելու համար : Երկրորդ մասին գալով , կտակարարը կը փափագի եւ կը պատուիրէ որ յիշեալ կտակակատարներու կողմէ ծախուի , եւ այդ վաճառումէն գոյացած եւ մնացած դրամով՝ տարեկան եւ մշտնջենական եկամուտ մը գնուի եւ տրուի ու սահմանուի այն եկեղեցիին որուն մէջ պիտի թաղուի մարմինը , եթէ յարմար դատեն իր կտակակատարները . իսկ եթէ այսպէս յարմար չդատուի , այս երկրորդ մասը — ինչ գումարի որ բարձրանայ եւ ինչ վիճակի մէջ որ ըլլայ — անդարձ կերպով տրուի եւ յատկացուի այն եկեղեցիին որուն մէջ պիտի թաղուի կտակարարիս մարմինը , պայմանով որ նոյն եկեղեցիին կրօնաւորները , վանահայրն ու վանքն ինչ որ ըլլան այն ատեն՝ եւ կամ ինչ որ պիտի ըլլան ապագային՝ պէտք են յանձնառու ըլլալ ամէն օր եւ միշտ ըսել տալ ու կատարել տալ մէկ կամ երկու պատարագ եւ կամ աւելի՝ իրենց եկեղեցիին խորաններէն ոմանց առջեւ . եւ ասիկա ընելու համար՝ յիշեալ կրօնաւորները , վանահայրն ու վանքը պիտի պարտաւորին պատուիրել եւ յանձնարարել յիշեալ եկեղեցիին կրօնաւորներէն մի քանիին՝ կտակարարիս , իրեն հօրը , մօրն ու կնոջը , զաւակներուն ու բոլոր ազգականներուն եւ բարերարներուն հոգիին համար կատարել : Այս երկրորդ բաժնի մասին՝ ըլլա՛յ եկամուտ եւ կամ ուրիշ կերպ , ի՛նչ գնով եւ արժէքով որ ըլլայ , յիշեալ կտակակատարներն այս կրօնաւորներուն հետ կարող են բանակցիլ ու համաձայնիլ՝ յիշատակուած պատարագները կամ պատարագն իրենց եկեղեցիին մէջ մատուցանել տալու համար , ինչ ձեւով որ կամենան կտակակատարները եւ ինչպէս որ յարմար դատեն , յիշեալ երկրորդ մասին քանակութեան նայելով , եւ իր կտակակատարներուն կարգադրութեան համաձայն :

Նոյնպէս , կտակարարս կը փափագի եւ կը պատուիրէ որ իր շարժական եւ անշարժ ստացուածքին երրորդ մասը տրուի եւ յանձնուի Գուխտոնին՝ իր խորթ եւ ապօրէն զաւկին : Այս երրորդ մասն անոր կը թողու , որպէս զի նա թէ՛ ուսում սորվի եւ թէ՛ իր պիտոյքը հոգայ : Այս երրորդ մասը պէտք է մնայ իր կտակակատարներուն ձեռքն եւ անոնց տրամադրութեան տակ , որոնք պարտաւոր են պահել զայն մինչեւ որ յիշեալ Գուխտոն քսան տարեկան ըլլայ : Գուխտոնը պիտի կառավարեն նոյն կտակակատարները , մինչեւ անոր քսան տարեկանի հասնիլը : Գուխտոն քսան տարեկան եղածին պէս , կտակարարս կը փափագի եւ